

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2017 թ. մայիսի 11-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Ս. Մինասյան

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Գիտական քաղականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՇՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրության, ՇՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.2. Կենտրոնն անմիջականորեն ենթարկվում է գիտական քաղականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտորին:
- 1.3. Կենտրոնի աշխատակիցները աշխատանքի նշանակվում և աշխատանքից ազատավում են ռեկտորի հրամանով:
- 1.4. Կենտրոնը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել ՇՊՀ ռեկտորի կողմից հարցը գիտական խորհրդում ներկայացնելուց հետո գիտական խորհրդի որոշման և հոգաբարձուների խորհրդի հաստատման դեպքում:

#### 2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. **Կենտրոնի նպատակը** համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության և միջազգայնացման գործընթացի կառավարումն է:
- 2.2. **Կենտրոնի խնդիրներն են.**
  - 2.2.1. Կրթական և գիտական գործընթացների արդյունավետ փոխկապակցվածության ապահովում և զարգացում:
  - 2.2.2. Գիտահետազոտական և ձեռնարկատիրական գործունեության փոխկապակցվածության ապահովում և զարգացում:
  - 2.2.3. Բուհի միջազգայնացմանն ուղղված գործընթացների ապահովում և զարգացում:

### **3. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

- 3.1. Կրթական և գիտական գործընթացների փոխկապակցվածության ապահովմանն ուղղված ռազմավարության, քաղաքականության և ընթացակարգերի մշակում, ներդրում և իրականացում:
- 3.2. Ներբուհական, հանրապետական և միջազգային հարթակներում գիտահետազոտական դրամաշնորհների մրցույթների մասնակցության խթանում:
- 3.3. Կրթական և գիտական գործընթացներին միտված գիտահետազոտական գործունեության կազմակերպման նպատակով ֆինանսական, տեղեկատվական և նյութատեխնիկական ռեսուրսների որոնման համակարգում:
- 3.4. Բուհում իրականացվող գիտական, գիտահետազոտական, գիտամեթոդական և փորձագիտական աշխատանքների խթանում:
- 3.5. Կիրառական հետազոտությունների, փորձարարական աշխատանքների և ինովացիոն գործունեության կատարելագործման խթանում:
- 3.6. Բուհի միջազգայնացմանն ուղղված ռազմավարության, քաղաքականության և ընթացակարգերի մշակում, ներդրում և իրականացում:
- 3.7. Հանրապետության և արտասահմանյան գիտահետազոտական ինստիտուտների ու համալսարանների հետ համագործակցության ապահովում և զարգացում:
- 3.8. Միջազգային ու հանրապետական գիտական և ուսումնական միջոցառումների, սեմինարների, վերապատրաստումների, աշխատաժողովների, գիտաժողովների կազմակերպում, ինչպես նաև դրանց մասնակցության խթանում:
- 3.9. Շարժունության և գիտահետազոտական տարբեր ծրագրերում ՇՊՀ ներգրավվածության խթանում:

### **4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 4.1. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՇՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:
- 4.2. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից: